



Հակոբ Պարոնյան

Թատրոն

ՈՒՂԵՐՁ ԱՌՔԱՅՍԵՐԼԻ ԱՀՄԵՏ ԲԱՇԱՅ ԿՈՒՍԱԿԱԼ ՋՄԻՒՌՆԻՈՅ

Լրագիրք պատմեցին Իգմիրի դէպքը, արգոյ հասարակութիւնն ալ կարդաց ու իմացաւ եղածն. մեզ կը մնայ ուղերձ մը հրատարակելով շնորհակալութիւննիս յայտնել առ Քայսերի Ահմետ բաշայ, որ Յովհաննէս Վէմեանն ու ընտանիքն սրօք եւ սուսերօք ծեծել տալով հանել տուաւ իւր հօրմէ ժառանգած տունէն, որ իւր եղբարցը մէկուն կողմէն պարտքի փոխարէն աւանդ տրուած է եղեր վաճառականի մը:

Ո՛վ Քայսերի Ահմետ բաշայ, ձեր այս քաջասրտութիւնը բոլոր աշխարհի հիացուց. կանանց վրայ յարձակելու եւ զանոնք նուաճելու համար շատ ուժ եւ քաջութիւն ունենալու է մէկը, եւ դուք ձեր քաջութեամբը շատ դիւրութեամբ յաջողեցաք կնիկները սրով նուաճելու: Ապահով եղի՛ք, որ եթէ կանանց դէմ պատերազմ մը հրատարակուի, բանակին հրամանատարը դուք պիտի ըլլաք: Հասարակութիւնը շատ շնորհակալ է ձեզմէ, որ առանց Պոլիսէն գօրք ուզելու կրցաք քանի մը կնիկներ ու պզտի տղաքներ գապել, անոնց թերը, գլուխը կտորելով եւ արեան մէջ թաթխելով: Հասարակութիւնը դարձեալ շնորհակալ է ձեզմէ, որ այդ կնիկները ու պզտի տղաքները կախել չտուիք, որովհետեւ քաջութիւն ցցունելու փափաքը կրնար զձեզ դէպի հոն մղել:

Ընդունեցէ՛ք, տէր, մեր յարգանաց ո՛չ այնչափ խորին հաւաստիքը եւ աշխատեցէք ուրիշ գաւառաց կնիկներն ու տղաքներն ալ սրօք եւ բրօք

գանակոծել տալով՝ ձեր քաջասրտության ապացոյցներէն գնեց չգրկել:

ԲԱՐԵԽՆԱՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Հայաստանէն հասած լուրերն վերջապէս կը յայտնեն թէ՛ հարստահարութիւնը Մշոյ կուսակալ կարգուած է, թէ՛ հարստահարութիւնն է Մուշը կառավարողը:

Չկայ հոն ո՛չ ստացուածքի ապահովութիւն, ո՛չ կենաց եւ ո՛չ ալ պատուոյ երաշխաւորութիւն, այլ կայ հոն յափշտակութիւն, մարդասպանութիւն, պատուոյ բռնաբարում եւ վերջապէս այն ամէն չարիքներն, որ կառավարութիւն չունեցող քաղաքի մը մէջ միայն կրնան գործուիլ:

Կարինէն Մասիսի դրկուած նամակ մը հետեւեալ տեղեկութիւններն կու տայ:

«Քաղաքս հասած լուրերն եւ մասնաւոր տեղեկութիւններն զՄուշ մեծ յուզման եւ վտանգի մէջ կը նկարագրեն. անխուսափելի եւ ծանրակշիռ վտանգի ենթարկուած է հոն տեղի ազգայնոց վիճակը: Եկած գիրերն անստորագիր են, որ միայն կը ծանուցանեն թէ՛ հեռագիրն ու փոսթան մեզ համար արգիլուած են, թէ՛ այգիները կը կտրեն, կը ճմլեն, կ'ոչնչացունեն, եւ եթէ հոն անձ մը դիմացնին ելնէ՛ դանակով կը զարնեն, թէ՛ հնձանները, դէզերն ու մարագները կ'այրուին, թէ՛ ուր որ հայ մը տեսնուի, խաչ եւ հաւատք կը հայիոյն, թէ՛ մանուկ տղաքներէն մինչեւ ծեր, այր եւ կին, առ հասարակ կը գանակոծուին տաճիկներէն, թէ՛ հայ աղաները կառավարութեան ժողովքները երթալէ դադրած են եւ այլն. կարծես կառավարութիւն չկայ Մշոյ մէջ... Մուշէն եւ գեղերէն 300-400 տնուոր հանրագրութիւն կազմեր են տաճկընալու համար... եւ այլն եւ այլն եւ այլն»:

Արդեօք Տպագրական տեսչութիւնը կը ներէ՞ մեզ այս անլուր վայրենութեանց, բարբարոսութեանց ու գազանութեանց տակ հեծեժող մեր եղբարց կականաբարձ հառաչանաց արձագանք տալ, անոնց հետ արտասուել, քորձ գգենլով եւ մեր սրտէն արիւն հոսեցնելով մեր տխուր ճակատագիրն ողբալ: Արդեօք, կ'ըսենք, Տպագրական տեսչութիւնն գոնէ այս շնորհն կ'ընէ՞ մեզ, թէ մեր սրտին, գգացմանց ու արտասուաց վրայ ալ տիրելու իշխանութիւն ունենալով՝ մեր դժբախտութիւնն ողբալն ալ կ'արգիլէ...

Հայերն ամէն վիշտ ու տառապանք, արքայ ու հալածանք կրելէն ետքը, այսօր ամենայն յօժարութեամբ եւ հաւատարմութեամբ կը տանին հպատակութեան լուծը, եւ ասոր փոխարէն կը բռնաբարուին թէ՛ ստացուածքի, թէ՛ կրօնի եւ թէ՛ պատուոյ կողմանէ: Այս լուծն հպատակութեան ըլլալէ դադրած՝ գերութեան լուծ եղած է, ու այնքան ծանրացած՝ որ անբերելի ըլլալով՝ Մշոյ հայերն ա՛լ անկարող կ'ըլլան գայն կրելու եւ հարստահարութենէ խալսելու յոյսով կրօնափոխութեան դիմել կ'որոշեն:

Հպատակ ազգ մը, երբ առ կառավարութիւնն ունեցած պարտաւորութիւնները կը կատարէ, լիովի իրաւունք կ'ունենայ կառավարութենէն ինչքի, կենաց եւ պատուոյ ապահովութիւն խնդրել. եւ կառավարութիւնն պարտաւոր է անոր այս խնդիրքն կատարել ո՛չ իբրեւ շնորհ, այլ իբրեւ իրեն պարտքը: Գաւառաց հայերը դարերէ ի վեր կը հարստահարուին, դարերէ ի վեր թաքրիւրներ կը գրուին ու հարստահարութիւնները դարերէ ի վեր կը շարունակուին. արդ, կամ այն է, որ գաւառաց հայերը միայն տուրք վճարելու եւ հարստահարուելու դատապարտուած են, կամ այն է, որ բարեխնամ կառավարութեան գաւառաց մէջ գտնուած չարախնամ կուսակալներն անկարող ըլլալով հարստահարիչները զսպելու, ոճրագործութեանց տեսարանին առջեւ նարկիլէ քաշելով կը գուարճանան:

Ասոնց ո՛րն ալ հաւանական ըլլայ՝ սա ճշմարիտ է, որ գաւառաց հայերն գրկուած են այն ամէն իրաւունքներէն, զորս հլու եւ հաւատարիմ հպատակ ազգերն կը վայելեն ամէն տեղ եւ ամէն ատեն:

Լսածնուս նայելով՝ ս. պատրիարք հայրն Մեծ Եպարքոսին ներկայացեր ու Մշոյ այս վիճակն նկարագրելով ետ դարձեր է գոհացուցիչ խոստումներով:

Աղօթենք Աստուծոյ, որ այս խոստումներն իր նախորդաց պէս ապարդիւն չմնան ու բարձր. Մահնուտ Նետիմ քաշային օրով իսպառ վերնան գաւառներէն այս հարստահարութիւններն, որ հակառակ բարեխնամ կառավարութեան կամացը տեղի կ'ունենան:

**ՈՒՂԵՐՁ ԱՌ ՔԱՅՍԵՐԼԻ ԱՀՄԵՏ ԲԱՇԱՅ ԿՈՒՍԱԿԱԼ
ՉՄԻՒՌՆԻՈՅ**

Լրագիրք պատմեցին Իզմիրի դէպքը, արգոյ հասարակութիւնն ալ կարդաց ու ինացաւ եղածն. մեզ կը մնայ ողերձ մը հրատարակելով շնորհակալութիւնն իս յայտնել առ Քայսերլի Ահմետ բաշայ, որ Յովհաննէս Վէմեանն ու ընտանիքն սրօք եւ սուսերօք ծեծել տալով հանել տուաւ իր հօրմէ ժառանգած տունէն, որ իր եղբարցը մէկուն կողմէն պարտքի փոխարէն աւանդ տրուած է եղեր վաճառականի մը:

Ո՛վ Քայսերլի Ահմետ բաշայ, ձեր այս քաջասրտութիւնը բոլոր աշխարհի հիացուց. կանանց վրայ յարձակելու եւ զանոնք նուաճելու համար շատ ուժ եւ քաջութիւն ունենալու է մէկը, եւ դուք ձեր քաջութեամբը շատ դիւրութեամբ յաջողեցաք կնիկները սրով նուաճելու: Ապահով եղի՛ք, որ եթէ կանանց դէմ պատերազմ մը հրատարակուի, բանակին հրամանատարը դուք պիտի ըլլաք: Հասարակութիւնը շատ շնորհակալ է ձեզմէ, որ առանց Պոլիսէն գօրք ուզելու կրցաք քանի մը կնիկներ ու պզտի տղաքներ զսպել, անոնց թելը, գլուխը կտրելով եւ արեան մէջ թաթխելով: Հասարակութիւնը դարձեալ շնորհակալ է ձեզմէ, որ այդ կնիկները ու պզտի տղաքները կախել չտուիք, որովհետեւ քաջութիւն ցցունելու փափաքը կրնար զձեզ դէպի հոն մղել:

Ընդունեցէ՛ք, տէր, մեր յարգանաց ո՛չ այնչափ խորին հաւաստիքը եւ աշխատեցէք ուրիշ գաւառաց կնիկներն ու տղաքներն ալ սրօք եւ բրօք գանակոծել տալով՝ ձեր քաջասրտութեան ապացոյցներէն զմեզ չզրկել:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄ

Նոյեմբեր քսանըջորսին Տպագրական տեսչութեան կողմէ հետեւեալն ընդունեցինք.

«Թատրոն նամ էրմենիճէ դագեթայ աղրագէ միւլթենի մուհարիրաթ ճիւմլեսիմտեն օլմաք իօզրէ Մուշտան ալարագ կեչեն ճումասա էրթեսի կիւնքի նիւսխեսիմէ հիւլասաթեն տերճ իթտիկի մեքթուպուն էթրաֆընա հիօզն ու մաթեն ալամեթի վագ էթմիշ վէ մեքթուպը մեզքիւրտէ միւնտերիճ արաճիֆ վէ միւլալաղաթէ պինա իտերէք գիյրիմէ թեճավուզի պագի միթալաաթ տախի իլաւէ էթմիշ օլտուդունտան թարիխի իլանտեն իթիպարեն պիր մահ միտտեթլէ թաթիլ իտիւմիշտիր»:

Թատրոնի դադարումը, ինչպես որ կը հասկցուի վերոգրեալ ծանուցումէն, Մուշէն առնուած նամակն սեւ գիծերով շրջապատելնէս ու անոր վրայ չափազանց լեզու գործածելնէս յառաջ եկած է:

Եթէ գիտնայինք, որ սեւ շրջանակը մեր հասկցածէն տարբեր կերպով պիտի նկատուի, եթէ գիտնայինք, որ մեր լեզուն չափազանց պիտի կարծուի, ո՛չ այդ սեւ գիծերը կը դնէինք, ո՛չ ալ այդ լեզուն կը գործածէինք: Մենք այնպէս համոզուած էինք, որ Մուշի նամակն սեւ շրջանակի մը մէջ դնելով՝ հետեւած էինք տպագրութեան այն ամենապարզ կանոնին, որով խմբագիրներն սեւ շրջանակի մէջ կ'առնեն տխուր լուրերն. մենք այդ լեզուն գործածելով՝ վստահ էինք, որ մեղմ, օրինաւոր, աղերսալի եւ գթութիւն հայցող թշուառի մը լեզուն կը խօսէինք. սխալած ենք եղեր, եւ մեր սխալանաց պատիժը կրեցինք:

Սակայն այս հարուածն մեզի այնքան դառն երեւցաւ, որ մինչեւ այսօր ո՛ր որ սեւ գիծ մը կը տեսնանք կոր նէ՝ հազար մղոն հեռուէն կը քալենք կոր. եւ աս ալ բնական է, կեղոգ կեղորտիւյինտեն գորգար կ'ըսէ տաճկական առածը. եւ որովհետեւ մարդս պէտք է որ վնասուած բանէ մը խրատուի եւ անկէ հեռու փախչի, մենք ալ հրաման դրկեցինք տպարան, որ թերթերնուս մէջ որչափ գիծ կայ նէ՝ ամէնն ալ դուրս վանէ. թող գիծէն գալիք բարիքն Աստուծմէն գայ: Ասոր ի պատասխան՝ տպարանապետը հարցուցած էր՝ թէ գիծն հանէ, տեղը ի՞նչ դնէ: Գիծերն հանէ՛, տեղը ինչ կ'ուզես նէ՝ ան դիր, ըսինք իրեն: Ուրախ ենք, որ տպարանապետն անմիջապէս կատարեր է մեր խնդիրքը, որով Թատրոնն այսօր առանց գիծերու ներկայանալով՝ դադարման առիթ տուող բաներէն մին իր մէջէն պակասեցուցած կ'ըլլայ:

Աստուած մէյ մ'ալ ասանկ ցաւ չցցունէ...

ՀԱՆԳԻՍՏ ՄՇԵՑԻ ՊԱՐՈՆ ՄԿԸՐԻ

Աշխարհի մէջ կարի սակաւաթիւ եղած են այն մարդիկը, որ մասնաւորի մը կամ ընդհանրութեան մը բարիք կ'ընեն՝ միայն բարի՛ք ընելու նպատակով. այս անձանց է պահուած ճշմարիտ փառաց ժառանգորդ ըլլալու իրաւունքը, այս

անձանց Է Աստուծոյ արքայութեան մէջ բարձր աստիճան:

Հայ ազգը այս օրերս սակաւաթիւ անձերէն մէկը կորոյս. հայ ազգը չճանաչեց զանի, բայց այն անձը ո՛չ միայն լաւ ճանաչեց իր ազգը, այլեւ անոր համար մաշեցաւ, անոր համար հիւծեցաւ եւ իր բոլոր հարստութիւնը անոր պիտոյիցը ծախսեց. պա՛րզ ապրեցաւ, աղքատութեան մէ՛ջ ապրեցաւ, անձանօթ եւ աննշան ապրեցաւ, վասնզի փառաց եւ պատուոյ համար չապրեցաւ. ազգին համար միայն ապրեցաւ եւ ազգին տանը մէջ, Ազգային Հիւանդանոցին մէջ կնքեց իր թանկագին կեանքը:

Մշեցի պարոն Մկրրն Էր ասի, Մշեցի Մկրր կը կոչէին ամէն զինքը ճանչցողները եւ այս անունով գոհ կ'ըլլար ինքը. վասնզի իր մեծ երջանկութիւնը իր հայրենեաց անուան յաճախ յեղյեղութիւն ու անկորուստ մնալն Էր, իր հայրենեաց՝ որուն համար նիւթապէս եւ բարոյապէս կարի՛ շատ աշխատեցաւ: Տակաւին աչքներնուս առջեւն Է Մշեցի Մկրրը ազգային վարչութեան ժողովներուն մէջ, որ իր հայրենակցաց վիճակին բարութեան համար երեսանկեալ կ'աղաչէր ոտքի վրայ կանգնած այն Էֆենտի, պէյ, եպիսկոպոս, պատրիարք եւ այլ աստիճանաւոր անձանց առջեւ, որոնցմէ շատ մեծ Էր ինքը, թէեւ Մշեցի Մկրր անունն ու կապոյտ վարտիք մը կրելով՝ շատ մեծ Էր անոնցմէ, վասնզի ոչ որ անոնցմէ իրեն չափ սիրտ, միտք, ստակ եւ կեանք մաշեցուցած Էին հայրենեաց համար:

Արեւելեան պատերազմի ատեն շահու համար Խրիմ գացած ու հոն իր աշաւրջութեամբ 4 հազար լիրայէն աւելի ստակ շահած Էր. այս գումարն ամբողջ Մշոյ գաւառին մէջ ցանեց՝ ստակին տեղ մարդ բուսցունելու փափաքով եւ իր այս հարստութենէն իր որդւոցը միայն այնչափ բաժին հանելով, որով միայն Մշոյ մէջ կրնան ապրիլ, թերեւս այն դիտաւորութեամբ ըրաւ ասի, որ իր տղայքը ստիպուին իրենց հայրենիքէն չհեռանալու:

Ինքն գրել կարդալ չէր գիտեր, բայց բնական հանճար ունէր եւ անով հասկցած Էր թէ, իր հայրենակցաց թշուառութեան մէկ գլխաւոր պատճառն ալ տգիտութիւնն Էր. ուստի ամէն ջանք ըրաւ, որ իր հայրենեաց ապագայ գաւակներուն թշուառութիւնը հնար եղածին չափ թեթեւցնէ:

Ատեն մը Տոլմապահճէի կազմանէն պաշտօն մը ունէր, որով ամիսը 3 հազար դուրուշի չափ ստակ կը վաստկէր: Արդի վեհափառ Գեորգ կաթողիկոս ձանձրացած ըլլալով այս անձին ստեպ երթալ զինքը անհանգիստ ընելուն՝ Տարնոյ ժողովրդին այլ եւ այլ խնդիրներովը, աղաչեր էր զՏատեան Պօղոս պէյ, որ երթայ կազմանէին տնօրէնէն խնդրէ, որպէսզի շքողու զՄշեցի Մկրր ստեպ պատրիարքարան երթալուն: Բաշան զինքը կանչեր եւ հրաման ըրեր էր, որ չերթայ հոն, թէ ոչ զինքը կը վոնտէ: «Քառասունըհինգ տարի է որ կ'ապրիմ, հինգ տարի է, որ քու հացդ կ'ուտեմ, անկէ առջի քառսուն տարիներուն մէջ իմ հացս տուող Աստուածս այսուհետեւ ալ կու տայ. ես իմ ազգիս համար աշխատելէն չեմ կրնար ետ կենալ», պատասխաններ էր Մշեցի Մկրր եւ անմիջապէս առեր քալեր է հոնէն՝ այն ամսական 3000 դուրուշ շահը իր ազգին սիրուն զոհելով:

Քսանըհինգ տարիէ ի վեր իւր բոլոր հարստութիւնը եւ իր վաստակը իւր հայրենեաց նուիրեց. ինք ալ հոս հիւրասիրութեամբ, աղքատասիրութեամբ եւ ամենայն պարկեշտութեամբ ու ողջախոհութեամբ ապրեցաւ:

Ա'հ, քանի անգամ որ կը տեսնէի այս մեծ մարդը, կը դիտէի անոր բարձր հասակը, միայն աչացաւով վիրաւորուած վեհ դէմքը եւ կը լսէի անոր համեղ այլ ազդու ձայնը, մեծ մխիթարութիւն կը զգար սիրտս, զի անտէրունչ ազգիս տէրութիւն եւ պաշտպանութիւն ընելու անշահադէտ կամք, սիրտ եւ հոգի մը կը տեսնէի:

Աւա՛ղ, այս անհողդողդ կամքը, այս բարի սիրտը, այս վեհ հոգին ալ վերացաւ:

Երանի՛ թէ հանգուցեալ Մշեցի պարոն Մկրրին ցանաժ սերմերէն այլ մշեցիներ յառնէին անոր հոգովն ու սրտովը ուռճացած:

ՅԱԻԱԿՅՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿ ՄԸ

Մեր բարեկամներէն մին Թատրոնի դադարման վրայ ցուակցութիւն յայտնող եւ զգացմամբ լի նամակ մը դրկած ըլլալով մեզ ի հրատարակութիւն, սիրով կը հրատարակենք զայն չափազանց լեզուով գրուած տողերն կէտադրութեամբ անցնելով:

... Էֆենտի

Թատրոնի դադարման վրայ մեծ ցաւ գգացի: Նախ անոր համար որ
.....: Երկրորդ՝ անոր համար, որ ` ^: Երրորդ՝
անոր համար, որ, (.): Չորրորդ՝ անոր համար, որ
..... ' ': Բայց որովհետեւ Թատրոնը,
..... ^: Թէպէտեւ (.....) բայց
ինչո՞ւ համար, որովհետեւ, որո՞ւ կ'ըսես
..... «.....» անհրաժեշտ պէտք է ճշմարտութիւնը
....., այն ինչ, դուն ուրեք իբրեւ կայծ

..... (.....)..... «.....» ծանր է ծանր `
..... յառաջադիմութիւն, յառաջադիմութիւն,
ն՞որ ես, ո՞վ ` ըստ որում, իբր այն,
թէ մարդս ` քանի որ մարդս, պէտք
է որ մարդս: Ասիկա յայտնի ճշմարտութիւն մ'է, չեմ ըսեր թէ
բոլորովին ^, որովհետեւ ես ալ ո՞չ
ապաքէն դուն ալ յայտնի է որ, սա ալ
..... դժբախտութիւնը հոն է, որ, սրտի
գգացումներն:, միտքերն ոտքերը
շղթայագերծ ալիքներու նման նաւուն առագաստները:
^, ^ ասիկա կը հերքեմ:
..... կը մաղթեմ բարե՛ ` ^
բարոյապէս : ափսո՛ս, որչափ ալ վնասակար
..... `

...Տէր. հաճեցէ՛ք սոյն նամակս ձեր դիտողութիւններով մէկտեղ հրատարակել
ձեր ազատախօս թերթին մէջ, որով մնամ ցաւակից բարեկամդ՝

Գ. Թ.

Մեծ. Գ. Թ.

Շնորհակալ եմ ձեր սրտին զգացումներէն : Այո՛, իրաւունք ունիք, որովհետեւ
..... ո՞վ կը յուսար, որ, բայց դուք պիտի ըսէք թէ՛
ամենեւին, վասնզի բայց ինչեւէ: Մինչդէռ ըստ որում
..... եւ այլն

Քոյդ
Թատրոն

Թատրոնի դադարման միջոցին ազգային քանի մի թերթեր ալ դադրած՝ բայց
վերջէն իրենց ներուելով՝ նորէն հրատարակուիլ սկսած ըլլալնուն համար մեր
ցաւակցութիւնն ու խնդակցութիւնն միանգամայն կը յայտնենք:

ԲԱՌԵՐՈՒ ՆՈՐ ՍԱՀՄԱՆՆԵՐ

Ի՞նչ է լուսանկար պատկերը.

Շողոքորթ սը՝ որ ամէնէն տգեղին իսկ գեղեցիկ ես, կ'ըսէ:

Ի՞նչ է յուսահատութիւնը.

Ունեցածը յիմարաբար նետել:

Ի՞նչ է արդի քաղաքականութիւնը.

Քոնսուլիտի բիացան՝ որուն ժամ սը ետքը ինչ ըլլալիքը խաղացողներն ալ
չգիտեն:

Ի՞նչ է հիւանդութիւնը.

Պարտատէրներուն ձեռքէն խալսելու միակ միջոց:

Ի՞նչ է պատմությունը.

Ետիդ նայիլ, առջեդ տեսնել:

Ի՞նչ է տղու մը աշխարհ գալը.

Միեւնոյն գրքի նոր տպագրությունը:

Ի՞նչ է գերեզմանը.

Անդիի աշխարհին անշարժ թրամուէյը:

Ի՞նչ է ծերությունը.

Մահուան հետ ճիլվէ ընող:

Ի՞նչ է Այվագ ը.

Մարդկային քերականութեան կանոններու մէջ բացառութիւն մը:

ԵՐԿՈՒ ԱՄՍՈՒԱՆ ՏԱՐՍԸ

Աշխարհիս վրան ամէն արուեստ իրեն յատուկ գործիքներ ունի. նկարիչն՝ իր վրձինը, փայտահատը՝ իր կացինը եւն:

Կարգուիլն ալ արուեստ մ'է: Միրելու արուեստը այս օրուան օրս մեծ տեղ մը կը բռնէ, էսնաֆներուն ամէնէն բարձրն է, եւ անոնք միայն կրնան յարիլ այս արուեստին, որոնք որ սիրելու գործիքն ունին, հասկցար հարկաւ, որ սիրտ ըսել կ'ուզեն:

Շատերն այս արուեստը իբր տղու խաղալիք կը նկատեն, դիւրին բան մը կը կարծեն, եւ առանց գործիքի անոր մէջը կը մտնեն:

Պատմենք:

Բոլոր կենացը մէջ Աստղիկին երեսը բնաւ չտեսած, յիշողութեան տկարութեանը պատճառաւ, երիտասարդութեանը ժամանակը կարգուելու մոռցած՝ եօթանասուն տարու ակռաները թափած ծերուկ մը գաշխարհ ճաշակել կը փափաքի, եւ իր բարեկամներէն մէկուն հետ խորհրդակցելէ վերջը՝ ասկէ իբր երկու ամիս առաջ՝ աղուոր, սիրուն, տասներջորս տարու աղջկան մը հետ կը կարգուի:

Չեն յիշեր, ո՞ր կարդացեր են, թէ անուսնութիւնը արօր մ'է, որուն լծուած են այրն ու կինը:

Քեզի կը հարցնեն հիմա, ընթերցող, ի՞նչպէս կ'երթայ այն արօրը՝ որուն լծուած են եօթանասուն տարու ծերուկ մը եւ տասներջորս տարու աղջիկ մը:

Աղջիկը քալել կ'ուզէ, ծերուկը չկրնար քալել, բոլոր բեռը աղջկան վրայ կը մնայ:

Ի՞նչ ըսեն ան ծերերուն, որ արօրի վրայ նստելու տարիքնուն մէջ, հոն կը լծուին, եւ արօրն ալ, իրենց ընկերն ալ կ'էս ճամբան կը թողուն:

Վայրկեաններ, ժամեր, օրեր կ'անցնին, երկու ամիս կ'ըլլայ, հարսը իր սրտին համապատասխանող սիրտ մը չգտնալով ամուսնոյն վրայ՝ մօրը իմաց կու տայ:

Մայրը կ'երթայ, իր աղջիկը կը լուծէ արօրէն, կ'առնէ կը տանի:

Ծերուկը լծուած կեցած է դեռ: Ծերուկին համար կ'ըսեն թէ՛ Հասունիսթ է եղեր:

Իրաւ է, շատ հասուն է, ուտուելու արժանի պտուղ մըն է: Որկրամուլ գերեզմանը չլսէ:

ՓՈՒՆԶԻՆ ԱՆԿՈՂԻՆԸ

Փունջին ուրբաթ ատուր թերթին մէջ կը կարդանք՝ որ մարդուն մէկը անկողին մ'է հնարեր: Այս անկողինը իրիկւրնէ կը յարդարես եղեր եւ արթննալ ուզած ժամուոյ՝ քեզի վեր վեր նետելով՝ կ'արթնցնէ եղեր. եւ մինչեւ որ շելնես նէ՝ հանգիստ չկենար եղեր:

Ասիկա նոր գիտ մը չէ, ասանկ անկողիններ մայրաքաղաքիս մէջ եւ այլուր շատ կը գտնուին, եւ որոնք ոչ թէ միայն ուզած ժամանակդ՝ այլ չուզած ժամանակդ ալ քեզ կը ցատկեցնեն եւ թող չեն տար, որ քնանաս:

Ասոնց մէկ աղէկ տեսակն ալ կայ, որ ամենեւին չքնացներ, այս տեսակ անկողիններուն մէջ պատկողները հետեւեալներն են.

Միրուիիներէն վոնտուած սիրահարներ:

Լրագիրին դադրած եւ շղադրած խմբագիրներ:

Ամսականին չառնող վարժապետներ:

Խօսքերնին շքալեցնող երեսփոխաններ:

Իրենց վիճակէն հեռու գտնուող առաջնորդներ:

Ի նպաստ իրենց տրուած ներկայացումներէն վնասուող դերասաններ:

Թրախոմայով աղջիկ առնողներ:

Մնտուկին տակէն ծակած թաղականներ:

Թրամուլէյ բանող փողոցները գտնուող տուներուն մէջ նստողներ:

ԵՐԱՋԻ ՄԷՉ ԳՐՈՒԱԾ ՅՕԴՈՒԱԾ ՄԸ

Ասկէ քանի մը շաբաթ առաջ՝ Մեղու յօդուածի մը մէջ երագ մը գրած էր, այս գիշեր ալ երագին մէջ յօդուած մը գրեց:

Երագնուս մէջ տեսածնիս եւ լսածնիս գրելու ազատ ըլլալով՝ յիշեալ յօդուածը հոս ալ կը դնենք:

Լրագրական օրէնք

Յօդ. Ա. Բոլոր լրագիրները դադրեցնել:

Յօդ. Բ. Խմբագիրներն անօթութեան վարժեցնել:

Յօդ. Գ. Աչքերու համար տեսչութիւն մը դնել, որպէսզի անիրաւութիւն մը տեսնելնուն պէս՝ զանոնք տեսնելէ դադրեցնէ:

Յօդ. Դ. Լրագիր մը իր ուզածը ամենայն ազատութեամբ կրնայ խորհիլ, բայց չկրնար խօսիլ:

Յօդ. Ե. Լրագիր մը իր խմբագրին վրայ կրնայ յարձակիլ:

Մնացած յօդուածները լրագրական տեսչութեան դէմ ըլլալուն համար՝ արած ենք: